

ՀՈՒՆԻՍ 2023

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>3</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	8
1.3. Ջրահեռացման համակարգ .....	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	9
1.5. Էներգահամակարգ .....	10
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	10
<b>2. Առևտրային տնօրինություն</b> .....	<b>11</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	12
2.2. Հասույթ .....	12
2.3. Գանձում .....	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	14
2.5. Ջրաչափեր .....	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	16
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>17</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	21
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	23
3.6. 1-85 թեժ գիծ .....	24
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>25</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>28</b>
5.1. Դասընթացներ/սեմինարներ .....	29
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	31
5.3. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության հետ .....	32
5.4. ԱՂՄ-ների ձեռքբերման և աշխատակիցներին բաշխման աշխատանքներ .....	32
5.5 Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ .....	33

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական, ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

- «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Մարի Թաղ 22 փողոցի ջրամատակարարումն իրականացվում էր  $d=100$ մմ քայքայված պողպատե ջրագծով, ինչի պատճառով անհնարին էր դարձել վերջիններիս հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից  $d=100$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է  $d=90$ մմ  $L=110$ գծ/մ պոլիէթիլային խողովակներով, իրականացվել են անհատական միացումներ  $d=25$ մմ  $L=60$ գծ/մ ընդհանուր երկարությամբ:



- «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Հալաբյան փողոցում 23 շենքի մոտ, տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է  $d=300$ մմ  $L=5.5$ գծ/մ քայքայված մետաղական խողովակը: Կատարված աշխատանքի արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, խնայվել է  $10$ լ/վրկ ջրաքանակ:



- «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող համայնք Զովունի, 8-րդ փողոցով անցնող  $d=50$ մմ ջրագծի  $L=30$ գծ/մ հատվածը խիստ քայքայված էր, անհնարին էր դարձել վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը և ջրագծի հետագա շահագործումը:



Տեղամասի աշխատակիցների կողմից նշված ջրագծի հատվածը փոխարինվել է  $d=63$ մմ,  $L=30$ գծ/մ պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, վերացել են ջրակորուստները և կրճատվել են հաճախակի վթարների արդյունքում առաջացող շահագործման ծախսերը:

- «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող համայնք Ուշի, 10-րդ փողոցով անցնող  $d=50$ մմ ջրագծի  $L=85$ գծ/մ հատվածը խիստ քայքայված էր, անհնարին էր դարձել ջրագծի հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից նշված ջրագծի հատվածը փոխարինվել է  $d=63$ մմ,  $L=85$ գծ/մ պոլիէթիլենային խողովակով:



Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, վերացել են ջրակորուստները և կրճատվել են հաճախակի վթարների արդյունքում առաջացող շահագործման ծախսերը: Կատարվել են անհատական միացումներ:

● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Քասախ համայնքում, Ավետիսյան և Թումանյան փողոցներում, տեղամասի աշխատակիցների կողմից նշված հատվածով անցնող քայքայված ջրագիծը փոխարինվել է  $d=160$ մմ  $L=380$ զմ/մ պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, վերացել են ջրակորուստները և կրճատվել են հաճախակի վթարների արդյունքում առաջացող շահագործման ծախսերը: «Շահումյան» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ռոմանոս Մելիքյան փողոցի 21-40 հասցեները սնուցող  $d=80-125$ մմ գործող ջրագծերը կառուցված էին դեռևս 1985 թվականներին, գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և շահագործման պիտանի չէին, հաճախակի առաջանում էին վթարներ, որոնք բերում էին ջրամատակարարման հաճախակի ընդհատումների: Տեղամասի աշխատակիցների կողմից շահագործումից հանվել է  $d=80-125$ մմ պողպատե քայքայված ջրագիծ՝  $L=400$ զմ/մ, կառուցվել է  $d=90-125$ մմ  $L=390$ զմմ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ: Թվով 30 բնակիչ-բաժանորդի ջրաչափերը փոխարինվել են և տեղափոխվել են տարածքից դուրս սահմանագատման կետերում տեղադրված դիտահորերի մեջ: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է փողոցի մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ  $Q=3$ լ/վ ջրաքանակ:

### Վայոց ձորի մարզ

● «Վայք» տեղամաս. ք.Վայք, Կամոյի փողոցը սնող  $d=50$ մմ մետաղական խողովակը գտնվում էր քայքայված վիճակում և պիտանի չէր հետագա շահագործման համար: Աշխատակիցների կողմից կառուցվել և փոխարինվել է  $d=63$ մմ  $L=37$ զմմ,  $d=25$ մմ  $L=8$ զմմ ջրագիծ և թվով 4  $d=15$ մմ, թվով 1  $d=40$ մմ գնդիկային փական:



### Արմավիրի մարզ

● «Էջմիածին» տեղամասի աշխատակիցների կողմից Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոց փողոցի 4, 6, 8 և Լ.Ազգալոյան փողոցի 4, 6 և 8 շենքերի ջրամատակարարման բարելավման նպատակով փոխարինվել և կառուցվել է ՊԷԹ  $d=160$ մմ  $L=500$ զմմ և  $d=63$ մմ  $L=350$ զմմ ջրագծեր: Նշված փողոցների թվով 550 բաժանորդ արդեն ունեն ինքնահոս ջրամատակարարում: Սահմանագատման կետ են տեղափոխվել անհատական դիտահորեր, տեղադրվել և փոխարինվել են մի շարք ջրաչափական սարքեր: Կատարված մեծածավալ շին. աշխատանքների արդյունքում շենքերի 5-րդ հարկերում ներկայումս ինքնահոս եղանակով ապահովված է 17-ժամյա կանոնավոր ջրամատակարարում, ինչն էլ թույլ է տվել շահագործումից հանել 30ԿՎՏ հզորությամբ շահագործվող պոմպը:




### Գեղարքունիքի մարզ

● «Մարտունի» տեղամաս. Ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ աշխատակիցների կողմից ք.Մարտունի, Երևանյան 43 և հարակից շենքերի բակում իրականացվել են  $d=23-63$ մմ  $L=540$ զմմ ջրագծերի վերակառուցման աշխատանքներ:



### Արագածոտնի մարզ

● «Աշտարակ» տեղամասի աշխատակիցների կողմից Աշտարակ քաղաքի Բագավան թաղամասի Վ.Համբարձումյան փողոցի  $d=100$ մմ քայքայված պողպատյա ջրագիծը փոխարինվել է  $d=75$ մմ  $L=350$ զմմ պլեթ խողովակաշարով, որը սնում է թաղամասի թվով 12 բազմաբանակարան շենք: Արդյունքում տնտեսվել է մոտ 1,5լ/վ ջուր և բարելավվել է մատակարարվող ջրի որակը:



## Ջրահեռացման համակարգ

● «Շահումյան» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Շերամ փողոցի 41, 43, 47 շենքերի ջրահեռացումն իրականացվում էր  $d=250$ մմ կերամիկական կոյուղագծով, որի  $L=12$ գծ/մ հատվածը փաստված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Կոյուղագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել խցանման բացման աշխատանքների իրականացումը և հետագա շահագործումը:

Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է  $d=250$ մմ  $L=12$ գծ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով, իրականացվել են Շերամի փողոցի 41, 43, 47 շենքերի  $d=250$ մմ կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքերի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:



● Հաղթանակ 9 փողոցի ջրահեռացումն իրականացվում էր  $d=200$ մմ կերամիկական կոյուղագծով, որի  $L=24$ գծ/մ հատվածը փաստված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է  $d=200$ մմ  $L=24$ գծ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ հատվածում ջրահեռացման համակարգը գործում է անխափան:

● Շահումյան 2 փողոցի ջրահեռացումն իրականացվում էր  $d=200$ մմ թուջե կոյուղագծով, որի  $L=12$ գծ/մ հատվածը փաստված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է  $d=200$ մմ  $L=12$ գծ/մ պոլիէթիլենային ծալքավոր խողովակով:



● «Արաբկիր» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Զարյան փողոցի 15 շենքի ջրահեռացումն իրականացվում էր  $d=250$ մմ ասբեստե կոյուղագծով, որի  $L=6$  գծ/մ հատվածը փաստված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Կոյուղագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել խցանման բացման աշխատանքների իրականացումը և հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է  $d=250$ մմ  $L=6$ գծ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, իրականացվել են ընդհանուր երկարությամբ  $L=6$ գծ/մ  $d=250$ մմ Զարյան փողոցի 15 շենքի կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Դավթաշեն վ/շ, 1թաղ 23շ դիմացով անցնող կոյուղագիծը խիստ քայքայված էր, անհնարին էր դարձել կոյուղագծի հետագա շահագործումը, որն առաջացրել էր հակասանիտարական վիճակ: Տեղամասի աշխատակիցների կողմից նշված կոյուղագծի հատվածը փոխարինվել է  $d=200$ մմ,  $L=72$ գծմ և  $d=250$ մմ,  $L=18$ գծմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով: Կատարված աշխատանքների արդյունքում վերացել են հաճախակի կրկնվող խցանումները, նվազել են շահագործման ծախսերը:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Դավթաշեն վ/շ, 2թաղ 26շ. դիմացով անցնող կոյուղագիծը փասսված էր, անհնարին էր դարձել կոյուղագծի հետագա շահագործումը հաճախակի կրկնվող խցանումների պատճառով:

Տեղամասի աշխատակիցների կողմից նշված կոյուղագծի հատվածը փոխարինվել է d=200մմ, L=42գծմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով:

Կատարված աշխատանքների արդյունքում վերացել են հաճախակի կրկնվող խցանումները, նվազել են շահագործման ծախսերը:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Դավթաշեն վ/շ, 1թաղ 51շ դիմացով անցնող կոյուղագիծը փասսված էր, անհնարին էր դարձել կոյուղագծի հետագա շահագործումը հաճախակի կրկնվող խցանումների պատճառով:

Տեղամասի աշխատակիցների կողմից նշված կոյուղագծի հատվածը փոխարինվել է d=200մմ, L=60գծմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով, հիմնովին նորոգվել է թվով 8 դիտահոր:



### Գեղարքունիքի մարզ

● «Մարտունի» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Մարտունի, Թումանյան փողոցում փոդարինվել է d=150մմ L=42գծմ կոյուղագիծ:



Հունիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1866
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	40153
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	42430
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	18270
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	13
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2230
Կառուցված ջրագիծ	մ	8306.3
Կառուցված կոյուղագիծ	մ	613.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	8
Փոխարինված փական	հատ	99
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	466
Մաքրված դիտահոր	հատ	1656
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	7.1
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1059
Ջրահեռացման ցանցում	հատ	1389
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հունիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	989	982	1045

## 1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	279	3	1	0	0	0	0	0	0	0	283
Փոխարինված	392	27	9	2	8	9	10	0	2	2	461
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	257	11	1	0	1	2	0	2	2	1	277
Ընդամենը	928	41	11	2	9	11	10	2	4	3	1021

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 1021 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

## 1.3. ԶՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում զճ/մ
1	Արաբկիր	0	216	6
2	Քանաքեռ-Զեյթուն	0	259	0
3	Մաշտոց	0	209	196
4	Շահումյան	160	179	26
5	Շիրակ	1305	421	12
6	Արթիկ	160	98	21
7	Ապարան	0	49	0
8	Ալավերդի	1860	22	36
9	Աշոցք	0	5	0
10	Բերդ	235	14	0
11	Իջևան	0	68	0
12	Լոռի	0	243	6
13	Նոյեմբերյան	0	21	0
14	Սպիտակ	0	19	0
15	Ստեփանավան	1800	9	0
16	Թալին	0	10	60
17	Տաշիր	0	9	0
18	Չարենցավան	0	91	11.5
19	Աբովյան	0	129	9
20	Հրազդան	0	102	0
21	Կենտրոն	340	246	0
22	Հյուսիս	0	249	156
23	Էրեբունի	540	150	12
24	Հարավ	100	251	39
25	Արմավիր	0	92	0
26	Արտաշատ	0	112	60
27	Էջմիածին	0	114	0
28	Աշտարակ	2640	31	0
29	Արարատ	0	53	0
30	Մասիս	0	51	0
31	Գավառ	0	33	20
32	Սևան	0	81	6
33	Մարտունի	0	22	42
34	Վարդենիս	0	12	3



h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
35	Ճամբարակ	0	17	12
36	Դիլիջան	0	61	0
37	Վայք	0	20	0
38	Եղեգնաձոր	130	13	0
39	Ջերմուկ	0	43	0
40	Միսիան	0	43	0
41	Գորիս	0	51	14.5
42	Կապան	216	88	6
43	Մեղրի	0	29	0
	Ընդամենը	9486	4035	754

#### 1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Ջերմուկի կեղտաջրերի պոմպակայանում էլեկտրական թողարկիչի խափանման արդյունքում այրվել էր 25 կվտ հզորությամբ կոյուղու պոմպի շարժիչը: Արդյունքում պոմպի շարժիչը պոմպերի վերանորոգման արհեստանոցում վերանորոգվելուց հետո տեղադրվեց պոմպակայանում: Փոխարինվեցին նաև էլ. վահանակում գտնվող խափանված թողարկիչը և ավտոմատիկայի հետ կապված որոշ ռելեներ: Արդյունքում պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

- Գավառի կեղտաջրերի պոմպակայանում պոմպերից մեկի արտադրողականությունն ընկել էր, որի արդյունքում պոմպը հորից դուրս բերելուց հետո պարզ դարձավ, որ բանվորական անիվը խցանվել էր: Արդյունքում այն մաքրվեց և տեղադրվեց: Մաքրվեցին նաև հակադարձ փականները, որոնք ևս խցանված էին: Այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում կոյուղաջրի հետ մեծ քանակի խճաքարեր էին լցվել ճաղավանդակներ, որի պատճառով շարքից դուրս էին եկել մանր ճաղավանդակի քերիչ սանրի ատամները: Արդյունքում քերիչ սանրը վերանորոգվեց և այժմ մաքրման կայանն աշխատում է բնականոն ընթացքով: Ձննվեցին նաև կայանում գտնվող բոլոր ռեդուկտորները և շարժիչները:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	62,570	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	68,589	18
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	174,685	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	110,959	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	142,427	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,575	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	13,422	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	9,800	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,141	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 368 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 293 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հունիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման հունիս ամսվա ընթացքում եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա:

Փոխարինվել են թվով 44 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և գտիչներ:

Թվով 2 մեքենա-մեխանիզմի անվադողեր նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 2 ավտոմեքենայի մարտկոցներ փոխարինվել են նորերով:

Թվով 10 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Փոխարինվել են թվով 8 մեքենայի էլ. հոսանքի բաշխիչները, կայծամուներ, կայծամուխ լարեր:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիրչներ, կարդանի խաչուկներ, ատաճանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.07.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 603,032 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. հունիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	671,632	575,052	85,6
	Իրավաբանական անձ	31,856	27,980	87,8

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	743,006	594,131	80,0
	Իրավաբանական անձ	37,208	27,314	73,4

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 603 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5542 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2423	1776	392	4591
	Իրավաբանական անձ	589	230	132	951
	Ընդամենը	3012	2006	524	5542

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունիս ամսին փոխարինված 5542 ջրաչափերի մոտ 46 %-ը (կամ 2530 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 447,783 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հունիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,441 մլն. դրամ (97 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հունիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 178 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 22.1 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.07.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,918	2,790
Բնակիչ-բաժանորդներ	7,767	1,838
Իրավաբանական անձեր	3,151	952

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 337.6 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



## 2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.07.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	712,830	592,942	83.18	36,148	27,303	75.53
	Առանց ջրաչափի	30,176	1,189	3.94	1,060	11	1.04

Տվյալների բազայում 01.07.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	884,408	389,517	44.04	39,885	8,726	21.88

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6897 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1272 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

### ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2448	2008	81.9
գ.Պոռչյան	1679	1149	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5985	1929	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 15516, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 14793, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 3995, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 4963, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2521, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3814 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 6697 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	481	212,498	39,260,932

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հունիս ամսվա շարունակականության տվյալը, կազմում է 96.6%, ինչը 0.2%-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 57 ճԿՓ: Ստորև ներկայացված է կարգաբերված ճԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2023թ-ի հունիս ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 179 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 178 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 2989 կՎտ.ժ (0,66%), այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 11 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 11 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 4581 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը ավել կլիներ 7870 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



#### Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել են 124 էլ. հաշվիչներ: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչ բաղադրիչում) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է 2,653,095 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում: «ՀԷՅ» ՓԲԸ-ից ձեռք է բերվել երկու տեխ. պայման (Դիտավան բնակավայրի նոր պոմպ և Տիչինա-Մեծարենց էլ. փական):

#### Պոմպակայանների ուսուսմասիրություն

Թվով 37 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսուսմասիրություններ, որոնց արդյունքում 31 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 368 բակային պոմպակայանում կատարվել են ուսուսմասիրություններ, որոնց արդյունքում թվով 293 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

#### Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում երկու հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

1. Զովունի պ/կ (Ma-35)
2. Նուբարաշեն պ/կ (Er-44)

Տեղադրված ընդհանուր 80 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 3591 կՎտ.ժ 3%:




**Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ**

● Հաշվետու ժամանակահատվածում 52 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:

**Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան**


● 2023թ. հունիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն նվազել է 190078 կՎտ/ժամ (4,64%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա**



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 189 048 ԿՎտ/ժ/ամիս կամ 8.70 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


**Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա**



**«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան**

● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 45 440 ԿՎտ/ժամ 0,60 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան**



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 189 048 ԿՎտ/ժ/ամիս կամ 8.70 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Բյուրեղավան քաղաքի և Արզնի գյուղի ջրագծերի ուղղում և թարմացում՝ «Գոտիավորման վարչության» կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա	քաղաք	2
Երևան քաղաքի ջրամատակարարման գոտիների ուղղումներ և թարմացումներ՝ «Գոտիավորման վարչության» կողմից տրված տեղեկատվության հիման վրա	քաղաք	1
Իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների ID կոդերի առանձնացում՝ ըստ ջրամատակարարման գոտիների «Գոտիավորման վարչության» համար	առանձնացում	1
Տիգրան Մեծ պողոտային հարող հատվածի ջրագծերի թվայնացում	թվայնացում	1
Արարատի Գետագատ, Վարդաշեն, Սրգանուշ, Կանաչուտ, Դեղձուտ համայնքների ջրի բաշխիչ համակարգերի հիդրավլիկ մոդելավորման համար ջրագծերի թարմացում և մոդելի կառուցում	համայնք	5
258 տեխնիկական պայմանների թվայնացում (426 բաժանորդ)	Տեխ պայման	258
Էլեկտրամատակարարման, գազամատակարարման և ասֆալտապատման նախագծերի թվայնացում	թվայնացում	1
Երևան քաղաքում կառուցված կոյուղագծերի երկարություն	մետր	330
Երևան քաղաքում կառուցված ջրագծերի երկարություն	մետր	833
«Ինտերակտիվ» համակարգում բաժանորդ կետերի ուղղում	կետ	2535
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	192
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	1012
Տեղադրված կամ փոխարինված փականներ	փական	23
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2603
ԱՏՀ-ում Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9439
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1806
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1821

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հունիս ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Նորաբացի չոր խցում կառուցվեց նոր d=200մմ միջանկյալ միացում, քանի որ հին d=200մմ միջանկյալ միացումը չէր բավականացնում Հարավ-Արևմտյան թաղամասի ճնշումներն ապահովելու համար:



- Արին-Բերդ Խարբերդ ջրատարի վրա առաջացել էր վթար 200լ/վ մեծությամբ: Կազմակերպվեց ջրատարի կանգառ և վերանորոգվեց ջրատարի թուջե հատվածը: Մի քանի օր հետո նույն ջրատարի վրա հայտնաբերվեցին վթարներ 5լ/վ մեծությամբ:

- Արզնի 1 ջրատարի վրա գազի հորերում գտնվող ջրթող փականը հաճախակի բացվում էր անհայտ անձանց կողմից: Պատրաստվեց d=250 մմ խցան և նշված փականը խցափակվեց, որի արդյունքում ունեցանք 5լ/վ խնայողություն:



## Գյուղ Ամասիա

● «Շիրակ» ՇՏ աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Ամասիա գյուղում, նոր ասֆալտապատման ենթակա փողոցում առկա է D-80մ քայքայված ջրագիծ, որի շահագործումը դարձել էր աննպատակահարմար: Թվով 4 բնակելի տան սնուցող D-40մ ջրագիծը, որը նախկինում սնուցվում էր վթարված ջրագծից, միացվեց իրեն հատվող D-100մ ջրագծին: Արդյունքում շահագործումից հանվեց D-80մ L-270մ պողպատյա ջրագծից, խնայվեց 1,5/վ ջրաքանակ:



## Քաղաք Գյումրի

● «Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում, Բարեկամության այգու հարակից Չայկովսկի փողոցում ասֆալտապատման աշխատանքներից առաջ իրականացվեց D=350մ L=240մ թուջե հին ջրագծի շահագործումից հանում և վերջինիս միջոցով ներանցման եղանակով D=25մ L=240մ ՊԷ նոր ջրագծի կառուցում: Արդյունքում տնտեսվեց Q = 2/վ ջրաքանակ:



● «Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Արևելյան Օղակային թաղամասում վարկային ծրագրով անցկացված նոր ջրամատակարարման ցանցի շահագործումով հին ջրամատակարարման ցանցը հանվեց շահագործումից խցափակելով Օղակային D=600մ ջրագծից: Արդյունքում շահագործումից հանվեց D=300մ L=3890մ պողպատե, D=200մ L=1280մ թուջե ջրագծեր և տնտեսվեց 15/վ ջրաքանակ:



## Քաղաք Հրազդան

● «Հրազդան» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Ավետիսյան փողոցով անցնող D=110մ ՊԷ ջրագծի վրա:




## Քաղաք Երևան

● «Մաշտոց» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Դավթաշեն 4-րդ թաղամաս 48 շենքի դիմաց, դիտահորի մեջ D = 100 թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3 /վ ջրաքանակ:



● «Արաբկիր» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Գրիգոր Արծրունի 70/1 շենքի մոտով անցնող D = 200մ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 9/վ ջրաքանակ:



● «Եղվարդ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Ազատամարտիկների 18 հասցեի մոտով անցնող D=25մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=3լ/վ ջրաքանակ:



● «Էրեբունի» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Նուբարաշեն 11-րդ փողոց 9-րդ շենքի մոտով անցնող D=100մմ պողպատե ջրագծի վրա: Շահագործումից հանվել է L=530մ D = 100մմ ջրագիծ և տնտեսվել Q = 5լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Մանթաշյան 5/2 շենքի բակում D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=7լ/վ ջրաքանակ:

### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հունիս ամսվա ընթացքում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Իջևանի «Ազատամուտ» քլորակայանում փոխարինվել է հիպոքլորիդի հաբի համակարգի խափանված ցիրկուլացիոն պոմպը նոր պոմպով: Վերջինս ապահովել է հիպոքլորիդի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Չարենցավանի «Ալափարս» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի տրման քլորագիծը:

● Քաղաք Մասիսի «Արարատյան 3/4» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի ինժեկտորը:



● Քաղաք Գավառի «Գանձակ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգը աշխատեցնող խափանված պոմպը փոխարինվել է նոր պոմպով հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

● Քաղաք Շրագղանի «Ծաղկաձոր» քլորակայանում մոնտաժվել և տեղադրվել է հիպոքլորիդի Սանիկետ համակարգը (40մ ջրի խողովակի կառուցում և մոնտաժում):





● Քաղաք Երևան Ծարավադրյուր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մաքրվել և տեղադրվել է հեղուկ քլորի համակարգի խցանված բաժանարար հանգույցը և Alldos փականը:



● Քաղաք Աշտարակի «Ղազարավան» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մաքրվել է քլորակայան մտնող ջրագծի ֆիլտրը:



● «Մաքրավան» քլորակայանում մաքրվել և տեղադրվել է հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը և դոզատորը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

● Քաղաք Չարենցավանի «Ֆանտան» քլորակայանում հիպոքլորիդի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հիպոքլորիդի հաբի համակարգի տրման քլորաջրի խողովակը:



### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 46440 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12566 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9568 զանգ (76.1%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2998 զանգ (23.9%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 33874 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 25395 զանգ (75%), իսկ մարզերինը՝ 8479 զանգ (25%):

● 2022թ. հունիս ամսվա համեմատ՝ 2023թ. մայիս ամսին 8,53%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, և շահագործման զանգերի քանակը նվազել է 1,23%-ով:

● 2022թ. հունիսի համեմատ՝ 2023թ. հունիս ամսին 1%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 37%-ով ավելացել է 5 բուսանից ավել զանգերի քանակը և 1%-ով ավելացել է հայտարարությունների լուսմն ավտոմատ ծառայության միջոցով:

● 2022թ. հունիսի համեմատ՝ 2023թ. հունիս ամսին 6,60%-ով նվազել են ջրամատակարարման բողոքները:

### 185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

	Ստորաբաժանում	2022 Հունիս	2023 Հունիս	
Առևտրային	Ընդամենը	11578	12566	8.53%
	Երևան	8967	9568	6.70%
	Մարզեր	2611	2998	14.82%
	Շահագործում	34297	33874	-1.23%
Շահագործում	Երևան	25486	25395	-0.36%
	Արարկիր	4638	3841	-17.18%
	Քանաքեռ-Զեյթուն	2235	2339	4.65%
	Մաշտոց	3218	3122	-2.98%
	Շահումյան	4603	5191	12.77%
	Շենգավիթ	2204	2793	26.72%
	Կենտրոն	2852	2824	-0.98%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	2562	2834	10.62%
	Էրեբունի	3174	2451	-22.78%
	այդ թվում կոյուղու վթար	3807	168	-95.59%
	այդ թվում դիտահորի խցանում	149	4727	3072.48%
	ՄԱՐԶԵՐ	8811	8479	-3.77%
	Հարավ	3986	4736	18.82%
	Հյուսիս	4825	3743	-22.42%
	այդ թվում կոյուղու վթար	68	35	-48.53%
այդ թվում դիտահորի խցանում	2233	2825	26.51%	
Ընդամենը	45875	46440	1.23%	



ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հանրային կապերի ծառայության համար ամառվա առաջին ամսվա գլխավոր թեման հանրապետության տարբեր բնակավայրերում մեկնարկած Պարտադիր կապիտալ աշխատանքների 2023 թվականի ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների լուսաբանումն էր: ATV հեռուստաալիքի հետ լուսաբանվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի վարչական շրջաններում, Արարատի մարզի Արարատ քաղաքում, Դարակերտ գյուղում և Կոտայքի մարզի Արամուս գյուղում մեկնարկած ջրագծերի վերակառուցման աշխատանքները: Նշված բնակավայրերում մի քանի կիլոմետր երկարությամբ կառուցվող խողովակաշարերով հնարավոր կլինի լուծել մի քանի հարյուր բաժանորդի ջրամատակարարման խնդիրներ, բաշխիչ ցանցը դարձնել հուսալի և կառավարելի, կտրուկ նվազեցնել շահագործման ծախսերը, իսկ հոսակորուստների և ապօրինի միացումների վերացման արդյունքում տնտեսել մեծ ջրաքանակ: Յուրաքանչյուր բնակավայրում կատարված աշխատանքների մասին նյութերը լուսանկարներով հրապարակվել են նաև ընկերության ֆեյսբուքյան և պաշտոնական կայքէջերում: Հունիս ամսին ՀԿԾ-ի կողմից ակտիվորեն լուսաբանվել են նաև շահագործման տեղամասերի ուժերով ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման աշխատանքները: Երևան, Կապան, Էջմիածին, Միսիան քաղաքներում, Արագած, Պտղնի գյուղերում և այլ բնակավայրերում կառուցած նոր ջրագծերի և կոյուղագծերի շնորհիվ շարունակաբար բարելավվել է ջրամատակարարման և ջրահեռացման ցանցը: Իսկ վերացված վթարների շնորհիվ հնարավոր է եղել տնտեսել մեծ ջրաքանակ:

Քիչ չէին հրապարակումները նաև ինժեներական կառույցների վերանորոգման աշխատանքների մասին: «Բերդ» Ջրի մաքրման կայանի (ՋՄԿ) 4 պարզարաններից մեկի աշխատանքը ճաքերի պատճառով ձմռանից դադարեցված էր: Պարզարանի երկաթբետոնե կոնստրուկցիաների վերանորոգման աշխատանքներից հետո այժմ ՋՄԿ-ն գործում է ամբողջ հզորությամբ: Փոխարինվեց նաև «Չվար-Մեղրի» և «Մեթենց-Մեղրի» աղբյուրները իրար կապող խողովակաշարի վթարված 80 մետր հատված, ինչպես նաև ինժեներական հատուկ լուծումներով ջրագծի վրա տեղադրվեց լողանային



փական, որը թույլ տվեց «Մեթենց-Մեղրի» աղբյուրում ջրաքանակի նվազման դեպքում ըստ անհրաժեշտության և ըստ ջրաքանակի պահանջի ջուր վերցնել «Չվար-Մեղրի» ջրաղբյուրից բացառելով մարդկային գործունը: Սպառողների և լրագրողների շրջանում տարատեսակ մեկնաբանություններից խուսափելու համար որպես իրազեկում, Հանրային կապերի ծառայությունը տարածեց հաղորդագրություն, որտեղ պարզաբանեց «Արարատյան» պոմպակայանի գործարկման պատճառը: Հաղորդագրության մեջ նշվեց, որ տարիներ շարունակ Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի որոշ բնակավայրերում ջրամատակարարումն ապահովվել է բացառապես Արարատյան խորքային-հորերից, որոնք ի սկզբանե նախատեսված են եղել տվյալ տարածքի ջուրն ապահովելու համար: Մակայն 2017 թ.-ի հունվարից ստանձնելով ՀՀ ողջ տարածքի ջրամատակարարման ապահովումը՝ «Վեոլիա Ջուր» ընկերությունը որոշակի տեխնիկական լուծումների շնորհիվ կարողացավ բարելավել Մասիսի և հարակից տարածքների ջրամատակարարումը սպառողներին առավելագույնս ապահովելով Գառնու և Արզականի լեռնային աղբյուրների ջրով: Ներկայում էլ տարվա մեջ շուրջ 8-9 ամիս, տարածաշրջանի որոշ բնակավայրեր ջուր ստանում են հենց այս աղբյուրներից: Միայն ամռան շոգ ամիսներին ջրի պահանջի ծավալների աճով պայմանավորված՝ մեծանում է ջրի սպառումը, և Գառնու, Արզականի աղբյուրների ջուրը չի բավարարում տվյալ տարածքի ջրամատակարարումն ապահովելու համար:

Այդ պատճառով ամռանը Մասիսի տարածաշրջանի որոշ բնակավայրերում, Երևանի Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների որոշ հատվածներում ջրամատակարարումն իրականացվում է նաև Արարատյան խորքային հորերից: Ճիշտ է, վերջիններիս ջրի որակն իր զգայորոշական և ֆիզիկաքիմիական հատկություններով զիջում է լեռնային աղբյուրների ջրին, սակայն միանգամայն համապատասխանում է սանիտարական նորմերի պահանջներին:

Վեոլիա Ջրի համակարգում շարունակվել են նաև ապօրինի միացումների դեմ պայքարը: Ընկերության ֆեյսբուքյան էջում ցուցադրվել են լուսանկարներ Գառնի-Երևան ջրատարի վրա հայտնաբերված ապօրինի միացումներից, որոնք օգտագործվում են ոռոգման նպատակով: Խոսվել է այն մասին, որ հատկապես ամռան ամիսներին, երբ ջրօգտագործման ծավալները մեծանում են, ջրի սակավության պատճառներից մեկը հենց խմելու ջուրը ոռոգման նպատակով ապօրինի օգտագործումն է:

Շարունակվել են Օրվա կարգավորիչ ջրամբարների լվացման, մաքրման և խիտահանման աշխատանքները՝ մասնավորապես Երևան, Բերդ և Ագարակ քաղաքներում:

Բաշխիչ ցանցի կառավարման, փողոցների և թաղամասերի ջրի ճնշումը կարգավորելու և կանոնավոր



ջրամատակարարում ապահովելու համար տեղադրվել են ճնշման կարգավորիչ փականներ (ՃԿՓ) Երևանի Ավան և Արաբկիր վարչական շրջաններում, Դիլիջան քաղաքում:

Ընկերության պաշտոնական և ֆեյսբուքյան էջերում հրապարակվել է հաղորդագրություն «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ Լուիզ Հանանիայի գլխավորած պատվիրակության և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Սարիաննա Շահինյանի հանդիպումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի

անդամների՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Գարեգին Բաղդասյանի հետ: Կողմերը քննարկել են Ընկերության ջրամատակարարման ծավալների, ընկերության հասույթի և ծախսերին առնչվող հարցեր: Հաշվետու ամսում հրապարակույթներ են եղել ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, վթարային և պլանային ջրանջատուի մասին:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

## 5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ


● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 22 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- ▶ «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:



● ՈԱԱ Բաժինը, ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02L հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջներով, Ընկերության Տեխնիկական տնօրինության 1 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- ▶ «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ավտոկռանների վարորդների որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց



● ՈԱԱ Բաժինը, ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02L հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև Հայաստանի հանրապետության Տեխնիկական կանոնակարգերի և Արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» 454-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներով, «Որակավորում եռակցողների. Պողպատի եռակցում հալումով ՄԱՍ 1» ստանդարտի պահանջներով, Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը

աշխատավայրում» Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջներով, Ընկերության Հյուսիս, Հարավ և Երևան շահագործման տնօրինությունների թվով 9 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- ▶ «Էլեկտրագազաեռակցման աշխատանքներին ներկայացվող անվտանգության պահանջները» թեմայով որակավորման դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:




● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Ընկերության Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 9 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:


- ▶ «Էքսկավատորի անվտանգ շահագործման պահանջները» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 1 ՕԿՁ-ում և 2 քրորակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 38 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանուժների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

**2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների**



**5.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

● Համաձայն ՀՀ Լոռու մարզպետի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2023թ-ի մայիսի 25-ին, Ընկերության «Հյուսիս» Շահագործման տնօրինության «Սպիտակ» շահագործման տեղամասը ՈԱԱ Բաժնի համակարգմամբ, մասնակցեցին Ուժեղ երկրաշարժի դեպքում «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Հրամանատարաշտաբային ուսումնասիր-ժանքին, որից հետո պատրաստվեց համապատասխան զեկույց և ներկայացվեց Լոռու մարզպետին (Ուսումնասիրության ղեկավարին):

**5.4 ԱՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

● Բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները, մշակել է աշխատողներին տրամադրվող անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ-ների ամառային արտահագուստ, պաշտպանիչ կոշիկ, անվտանգության գոտի-պարան, լուսասանդարադնող ժիլետ, պաշտպանիչ սախավարտ) տեխնիկական մասնագրերը, որոնց հիման վրա Ընկերությունը ձեռք է բերել վերագրյալ ԱՊՄ-ները և տրամադրել աշխատողներին:

● ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների ձեռքբերման գործընթացը շարունակական է և այդ առնչությամբ պարբերաբար



իրականացվում է կարիքների գնահատում և անհրաժեշտ քանակների ձեռքբերում:

● Այժմ իրականացվում են, Ընկերության կողմից սպասարկվող Ջրամատակարարման և Ջրահեռացման ցանցերի վթարավերականգնողական աշխատանքների ընթացում անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակով Շահագործման տեղամասերին անհրաժեշտ ճանապարհային անվտանգության նշանների ճանապարհային նախագծուշացնող կոնի, անվտանգության ժապավենի, ճանապարհային նշանների հենարանի, շարժական ցանկապատի ձեռքբերման գործընթացը:

## **5.5 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

● Դեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելմանը բացառմանն, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում «Պրոմէքսպերտ Գրուպ» ՍՊԸ-ի փորձագետների կողմից, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացվել են թվով 25 Արտադրական Վտանգավոր Օբյեկտի (2 քլորակայան, 18 ամբարձիչ սարքավորում, 1 ամբարձիչ հարմարանքով կահավորված ավտոմեքենա, 4 կաթսայատուն) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am